

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2020 թ.

N ---Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով`

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությանը (ՀՎՀՀ 02509992) սեփականության իրավունքով պատկանող, Պուշկինի փողոց 3/1 հասցեում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն` ազատելով 6540987 /վեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար ինը հարյուր ութսունյոթ/ դրամի չափով գույքահարկի վճարումից /ապառք` 4971904 դրամ, տույժ` 1569083 դրամ/:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՑՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Պուշկինի փողոց 3/1 հասցեում գտնվող շինության 2017, 2018 և 2019 թվականների գույքահարկի գումարը 19.03.2020 թվականի դրությամբ կազմում է 6540987 /վեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար ինը հարյուր ութսունյոթ/ դրամ:

Հայաստանի ժուռնալիստների միությունը ստեղծագործական հասարակական կազմակերպություն է, որը միավորում է մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, լրատվական գործակալությունների, հրատարակչությունների պրոֆեսիոնալ աշխատողներին:

Հայաստանի ժուռնալիստների միությունը լրագրողների միջազգային ֆեդերացիայի, լրագրողական միությունների միջազգային կոնֆեդերացիայի անդամ է: Հիմնական նպատակն է նպաստել բազմակարծության զարգացմանը, մեդիա օրենսդրության բարեփոխմանը, զանգվածային լրատվամիջոցների և խոսքի ազատության սահմանադրական իրավունքի ամրապնդմանը: Միության առաքելություններից է նաև լրատվամիջոցների աշխատողների մասնագիտական վարպետության բարձրացումը:

Ելնելով վերոգրյալից, Երևան քաղաքի ավագանու քննարկման է ներկայացվում «Հայաստանի ժուռնալիստների միություն հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը՝ 6540987 /վեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար ինը հարյուր ութսունյոթ/ դրամի չափով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ  
ԳՈՒՑՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Պուշկինի փողոց 3/1 հասցեում գտնվող շինության 2017, 2018 և 2019 թվականների գույքահարկի գումարը 19.03.2020 թվականի դրությամբ կազմում է 6540987 /վեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար ինը հարյուր ութսունյոթ/ դրամ:

Հաշվի առնելով, որ «Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությունը ստեղծագործական հասարակական կազմակերպություն է, որը միավորում է մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, լրատվական գործակալությունների, հրատարակչությունների պրոֆեսիոնալ աշխատողներին, ինչպես նաև նպաստում է բազմակարծության զարգացմանը, մեղիա օրենսդրության բարեփոխմանը, զանգվածային լրատվամիջոցների և խոսքի ազատության սահմանադրական իրավունքի ամրապնդմանը, նպատակահարմար եմ գտնում «Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությանը տրամադրել 6540987 /վեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար ինը հարյուր ութսունյոթ/ դրամի չափով գույքահարկի արտոնություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի ժուռնալիստների միություն հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի ժուռնալիստների միություն հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**